Արձանագրություն N 2
ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով բենզինի (ռեգուլյար) ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27.03.2018 թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաղինյան
Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Ղուկասյան / գնահատող /
Շ. Իսախանյան /գնահատող/
Ս. Ջաքոյան / բացող /
Գ. Խաչատրյան / բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Հ.Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2018 թվականի մարտի 27-ին ժամը 11:30-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 2 505 715 (երկու միլիոն հինգ հարյուր հինգ հազար յոթ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ էր ներկայացրել <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ն:

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<ՖԼԵՇ>> ՍՊԸ	flashltdtender@gmail.com	2 112 000	422 400	2 534 400

դ) Ներկայացված հայտի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է տվյալ ընթացակարգի շրջանակներում գնվելիք ապրանքի նախահաշվային արժեքը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ նիստին ներկա գտնվող <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ի տնօրենի հետ վարվել են գների նվազեցման շուրջ բանակցություններ:

2. Բանակցությունների արդյունքում <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ՝ 2 505 600 (երկու միլիոն հինգ հարյուր հինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<ՖԼԵՇ>> ՍՊԸ	flashltdtender@gmail.com	2 088 000	417 600	2 505 600

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Հ.Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<ՖԼԵԵՇ>> ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Հ.Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<ՖԼԵԵՇ>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած <<ՖԼԵԵՇ>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերով պահանջվող փաստաթղթերի: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ.Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պատասխանները ստանալու օրը, բայց ոչ ուշ, քան 2018

թվականի ապրիլի 3-ը ժամը 11:30-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ.Բաղինյան

Անդամ՝ _____ Տ.Ղուկասյան

_____ Շ.Իսախանյան

_____ Ս.Զաքոյան

_____ Գ.Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Հարությունյան